# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773*


**№ ԴԴ-3-Ե-5224**

**«07» հուլիսի 2021թ.**

**«ԱՐԽԻՎԻՆԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ**

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հունիսի 22-ի որոշմամբ «ԱՐԽԻՎԻՆԳ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2021թ. հուլիսի 02-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների ձևով: Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ներկայացվում է «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևին (Հավելված 3) համաձայն, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Բանկային երաշխիքի ձևով պայմանագրի ապահովումը ներկայացվում է «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևին (հավելված 4) համաձայն, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/01» ծածկագրով*
*գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788*